ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊՐՈԹԵԶԱՕՐԹՈՊԵԴԻԿ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԱՄՀՆ-ՀՄԱ-ԾՁԲ-17/32-Ս»

ք. Երևան «06» հոկտեմբերի 2017թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սատար» Հաշմանդամների ՀԿ-ն, ի դեմս նախագահ Հ. Հունանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն) համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Հրաժարվել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը. Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման ընդունման ակտի ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման մեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի ենթադրում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Տեղեկանների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3641050D (Երեսունվեց միլիոն չորս հարյուր սաս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները.

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը.

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե պայմանագրությունը կազմվում է տվյալ տարվա 20-ից հետո և այդ տարում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվառվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ.

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորություններն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո. և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հասարակության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնքված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը. եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի հասար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը.

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքներ և դրանցից բխող պարտավորությունները, դրվում են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Այդ որոշ, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձևաք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձևաք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Սասնա» հաշմանդամների ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3	ՀՀ ք. Երևան, Նոր-Արեշ 55 փ, 2
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
հ/հ 900011016723	հ/հ 16046027171300
ՀՎՀՀ 01506515	ՀՎՀՀ 02252332
Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան	Տնօրեն ..... Հ. Հունանյան
Ստորագրություն	Ստորագրություն

Հավելված N 1
« 06 » նոյեմբերի 2017թ. կնքված
«ՄՍՀՆ-ՀՄԱ-ՇՀԱՊՁԲ-17/32 » ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								Մատակարարման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չմ	միավորի գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը		հասցեն	ժամկետը
1	51411130	Ներկայացված է ստորև	հատ	239000	7648000	32		Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017
3	51411130	Ներկայացված է ստորև	զույգ	11450	9160000	800		Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017
4	51411130	Ներկայացված է ստորև	հատ	161500	7590500	47		Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017
5	51411130	Ներկայացված է ստորև	հատ	429000	12012000	28		Ըստ պահանջի	Մինչև 15.12.2017
Ընդամենը					36410500				

* ծառայությունները մատուցվում են ըստ պատվիրատուի պահանջի:

ՕՐԹԵԶՆԵՐ

Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, պլաստիկից՝ Չափաբաժին 1

ընդհանուր տեխնիկական
բնութագրեր, առանձնահատկություններ և այլ պայմաններ

Պատրաստման նյութեր և տեխնոլոգիա	միջազգային ISO ստանդարտներին համապատասխանող նյութերով և տեխնոլոգիաներով՝ կաշվե-մետաղական շինաներով, պլաստիկ արհեստական նյութերից, տեքստիլ և համակցված (բարձր ջերմաստիճանային և ցածր ջերմաստիճանային թերմոպլաստներ՝ պոլիպրոպիլեն և պոլիէթիլեն, նյութեր լամինացիայի համար, ածխապլաստիկ նյութեր և այլն): Հոդերը պատրաստվում են մետաղից (ալյումին, տիտան, երկաթ), պլաստիկից, կոմբինացված (պլաստիկ-մետաղ),մոդուլային, կարբոնային և այլն:
Պարագայի պատրաստման և/կամ տրամադրման պայմանները	Պատրաստման և տրամադրման առավելագույն ժամկետը 15 օր՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են անհրաժեշտ քանակի չափափորձարկումներ՝ մինչև պարագայի վերջնական հարմարեցումը շահառուին: Պատրաստման ժամկետը կարող է [illegible]

	սահմանված ժամկետում չի ներկայացնում չափափորձարկման: Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատապես, կատարելով համապատասխան չափագրումներ՝հաշվի առնելով ախտաբանական վիճակի բնույթը, ուղեկցող հիվանդությունների և վերքերի առկայությունը, բժշկի կողմից նշանակված օրթեզի կրման նպատակը, դեֆորմացիայի շտկման հատվածը և չափը: Շահառուին սովորեցվում է պարագայից օգտվելու ձևը և տրամադրվում է գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ դրա հիմնական տեխբնութագրերի, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ: Շահառուին է հանձնվում վերջնական փորձարկումից և նրա գրավոր համաձայնությունից հետո:
Չափաբաժինների ներկայացվող պահանջները	Պետք է բավարարի շահառուի պահանջներին՝ բժշկական ցուցումներով թեթևությամբ անթրոպոմետրիկ տվյալներով տարիքային առանձնահատկություններով դիմացկունությամբ և ամրությամբ ֆունկցիոնալությամբ հարմարությամբ էսթետիկ տվյալներով
Վիճակը	Չօգտագործված, ամբողջությամբ նոր նյութերից և դետալներից պատրաստված
Երաշխիքային ժամկետ	Առանց հոդի օրթեզների համար՝վեց ամիս, հոդով օրթեզների համար՝ մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգումները, դրանց հետ կապված խնդիրների վերացումը (ընդհուպ նորով փոխարինումը) իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին, եթե թերությունը չի առաջացել շահառուի մեղավորությամբ:
Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը պետք է պատրաստվեն հիպոալերգիկ նյութերի: Օրթեզները պետք է բացառեն ճնշումը չթույլատրվող հատվածների վրա (ավշային հանգույցներ, կրծքագեղձեր, ոսկրային դուրս ցցված հատվածներ, մակերեսային անոթներ, նյարդեր), ելնելով անձի ֆիզիոլոգիական առանձնահատկություններից

			անհրաժեշտության դեպքում ներսից պատվեն փափուկ պոլիմերային կամ տեքստիլ նյութերով, բավարարեն շահառուի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին՝ հաշվի առնելով նրա հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը, չպետք է խորացնեն առկա ախտաբանական խնդիրները:
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ			
1	Ամբողջ ոտքի օրթեզ հոդով, պլաստիկից	13.1 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, պլաստիկից (KAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում, սրունք-թաթային հոդն անշարժ է: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		13 2 Ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, պլաստիկից (KAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին՝ մինչև ազդրի միջին-վերին 3-րդը, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
		13.3 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան հոդով, պլաստիկից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան հոդում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող
		13.4 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ ծնկան և սրունք-թաթային հոդերով, պլաստիկից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային և ծնկան հոդերին, վերին եզրը հենվում է նստաթմբին, հնարավորություն է տալիս շարժումներ ծնկան և սրունք-թաթային հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ, բեռնաթափող
		13.5 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային հոդով, պլաստիկից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային հոդում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է

		ամրագոտիներով:
	13.6 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային և ծնկան հոդերով, պլաստիկից (HKAFO)	**Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային և ծնկան հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ
	13.7 Կոնք-ծունկ-սրունք-թաթային օրթեզ կոնքային ծնկան և սրունք-թաթային հոդերով, պլաստիկից (HKAFO)	Տեղադրվում է ոտնաթաթին, սրունք-թաթային, ծնկան և կոնք-ազդրային հոդերին, հնարավորություն է տալիս շարժումներ կոնք-ազդրային, ծնկան և սրունք-թաթային հոդերում: Արհեստական հոդն ունի անկյան կարգավորման և ֆիքսման մեխանիզմ: Պատրաստվում է մետաղական շինաներից և պլաստիկից, ամրանում է ամրագոտիներով: **Ֆունկցիան՝** անշարժացնող, շտկող, ֆունկցիոնալ

Պրոթեզի կոշիկներ
/Չափաբաժին 2 /

Չափաբաժնի տեխնիկական բնութագրեր, առանձնահատկություններ և այլ պայմաններ

Պատրաստման նյութեր և տեխնոլոգիա	Միջազգային ստանդարտներին համապատասխան տեխնոլոգիայով և նյութերով
Պարագայի պատրաստման և տրամադրման պայմանները	Պատրաստման և տրամադրման առավելագույն ժամկետը 15 օր, որի ընթացքում կատարվում են անհրաժեշտ քանակի չափափորձարկումներ՝մինչ պարագայի վերջնական տրամադրումը շահառուին: Պատրաստման ժամկետը կարող է երկարաձգվել շահառուի մեղքով, եթե նա սահմանված ժամկետում չի ներկայանում չափափորձարկման: Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է առողջ վերջույթի ոտնաթաթի չափով՝ անհատական մոտեցմամբ: Ստորին վերջույթը պրոթեզավորված անձանց յուրաքանչյուր տարի տրամադրվում է երկու զույգ պրոթեզի կոշիկ, մեկ զույգն առանց տաքացված տակդիրների, իսկ մյուս զույգը՝ կիսաճիտք կամ երկսրաճիտք: Վերին երկու վերջույթների ծայրատներով, ինչպես նաև մեկ ձեռքի ծայրատով, մյուս ձեռքի դաստակի ձևախեղումով հաշմանդամություն ունեցող շահառուներին տրվում է կողային ռետինե ժապավեններով պրոթեզի կոշիկ Շահառուին սովորեցվում է պարագայից օգտվելու ձևը և տրամադրվում է տեղեկատվություն դրա հիմնական տեխնիկական բնութագրերի, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական

	տրամադրման ժամկետի վերաբերյալ: Շահառուին է հանձնվում վերջնական փորձարկումից և նրա գրավոր համաձայնությունից հետո:
Չափաբաժիններին ներկայացվող պահանջները	Տեսականին ընդգրկում է մոդային մոդելներ՝ Առանց տաքացված տակդիրների՝ ա) մեծահասակների յուրաքանչյուր սեռի համար առնվազն 2 մոդելային տարբերակ և 3 գույն բ) երեխաների յուրաքանչյուր սեռի համար՝ առնվազն 3 մոդելային տարբերակ և 3 գույն: Կիսաճիտք կամ երկարաճիտք՝ ա) մեծահասակների յուրաքանչյուր սեռի համար առնվազն 2 մոդելային տարբերակ և 3 գույն բ) երեխաների յուրաքանչյուր սեռի համար՝առնվազն 3 մոդելային տարբերակ և 3 գույն: Պետք է բավարարի շահառուի պահանջներին՝ անթրոպոմետրիկ տվյալներով բժշկական ցուցումով թեթևությամբ տարիքային առանձնահատկությամբ սեռային առանձնահատկությամբ դիմացկունությամբ և ամրությամբ ֆունկցիոնալությամբ հարմարությամբ էսթետիկ տվյալներով
Վիճակը	Չօգտագործված, ամբողջությամբ նոր նյութերից պատրաստված
Երաշխիքային ժամկետ	Մեկ տարի, որի ընթացքում պահանջվող վերանորոգումները, որակի հետ կապված խնդիրների վերացումը (ընդհուպ նորով փոխարինումը) իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին, եթե թերություններ չի առաջացել շահառուի մեղավորությամբ:
Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը պետք է բավարարեն շահառուի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին՝ հաշվի առնելով նրա հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը:
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Պրոթեզի կոշիկ **Չափաբաժին 2**	Պատրաստվում է անհատապես՝բնական կաշվե հումքից և այլ օժանդակ նյութերից, դրվում է երկաթե սուպինատոր, տակացուն ամառային կոշիկների համար՝ պետք է լինի ՊՎԽ-ից, ձմեռային կոշիկների համար՝ ՏԷՊ-ից, միջատակը (ստելկան) կոշտ կաշվից՝ պոլի: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղադրվում են ռետինե ժապավեններ:
Չափաբաժին 4 Էկզոսկելիտար սրունքի	Էկզոսկելիտար սրունքի պրոթեզ՝ լամինացիայով *Պրոթեզ կրողին տրամադրվում է 1 ծայրակի 3 զույգ՝ 1*

պրոթեզ /լամինացիայով/ ՊՆ8-01	*սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա.* *Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:*
Չափաբաժին 5	Էնդոսկելիտար սրունքի պրոթեզ՝ լամինացիայով
Էնդոսկելիտար սրունքի պրոթեզ/լամինացիայով/ ՊՆ8-02	Պրոթեզ կողմին տրամադրվում է 1 ծայրատի 3 գուլպա՝ 1 սիլիկոնե և 2 բրդյա-բամբակյա և 2 ծայրատի համար 6 գուլպա՝ 2 սիլիկոնե և 4 բրդյա-բամբակյա: Գուլպաները տրամադրվում են նաև նախորդ տարիներին սույն պրոթեզ ստացողներին:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար վարել անձնական գործ (ներառյալ՝ հեռախոսահամար)
2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը.
3. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ,մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության:
4. Շահառուին տրամադրել գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ մատուցված ծառայության, հիմնական տեխնիկական բնութագրերի, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ՝ ***պապվիրատուից ստացած ձևաչափով:***
5. Իրենց դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և դրանց վերանորոգման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պապվիրատուից ստացած ձևաչափով:***
6. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

   1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

   2) մասնագիտական փորձառություն.

   3) տեխնիկական միջոցներ.

   4) ֆինանսական միջոցներ.

   5) աշխատանքային ռեսուրսներ.

   6) համապատասխան և մատչելի շենքային պայմաններ՝ քաղաքացիներին պատշաճ ընդունելու և սպասարկելու, արտադրության գործընթացը կազմակերպելու համար.

7. Ծառայություն մատուցելուց հետո՝ նույն օրը, ծառայություն ստացած անձանց տվյալները (ներառյալ հեռախոսահամար) մուտքագրել «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման» տեղեկատվական համակարգ՝ ղեկավարվելով այդ

համակարգի ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջներով և վարել շտեմարանը:

8. Տուցակագրել և 2017 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել այն անձանց տվյալները, այդ թվում՝ անուն, ազգանուն, ծննդյան օր, անձնագրի սերիա, պարագայի անվանում, քանակ, հեռախոսահամար, ովքեր չեն ապահովվել սույն տեխնիկական բնութագրերով նախատեսված պարագաների քանակը ավարտվելու պատճառով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Վստար» Հաշմանդամների ՀԿ

Նախագահ ..... Հ. Հունանյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
«06» հոկտեմբերի 2017թ. կնքված
«ԱԱՀՀ-ՀՄԱ-ԾՁԲ-17/32-Ա» ծածկագրով պայմանագրի

ԿՁԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Արտադրանքի հիմնական տեսակի համարը	Գնումների պատվերի նախնական ծածկագիրը՝ ըստ ՊՄԱ դասակարգման (ԳՊԴ)	Անվանումը	Ընտրության ենթակա ապրանքների ծավալները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	51411130	Ամբողջ ուղղակի ցրթեզ հոդով, պլաստիկից										2523840	5047680	7648000	7648000
2	51411130	Պրոթեզի կոշիկ										3022800	6045600	9160000	9160000
4	51411130	Էկզոսկելետար սրունքի պրոթեզ /լամինացիայով/ ՊՆՑ-01										2504865	5008730	7590500	7590500
5	51411130	Էնդոսկելետար սրունքի պրոթեզ/լամինացիայով/ ՊՆՑ-02										3963960	7927920	12012000	12012000
Ընդամենը												12015465	24030930	36410500	36410500

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Աշխատակազմի ղեկավար ..... Ա. Գրիգորյան
/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սատար» Հաշմանդամների ՀԿ

Նախագահ ..... Հ. Ծոլակյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված 3
«   »   20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
______________________	______________________
______________________	______________________
գտնվելու վայրը __________	գտնվելու վայրը __________
հհ __________	հհ __________
______________________	______________________
ՀՎՀՀ __________	ՀՎՀՀ __________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   »«   » 20   թ.

Պայմանագրի կողմերը՝ Պայմանագրի անվանումը՝ ________ ____________
Պայմանագրի կնքման ամսաթիվը «____» «   __________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________ ______________ ______ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________ ______________ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «   __________» 20 թ. կազմված՝ փաստը հաստատող նախագծած ներկայացուցչի եզրակացության այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ սույն հանձնված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների քանակական ցուցանիշը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Մատուցված ծառայությունների քանակական ցուցանիշը: փաստացի	Մատուցված ծառայությունների կատարման ժամկետը: ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Մատուցված ծառայությունների կատարման ժամկետը: փաստացի	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ վճարման ժամանակացույցի)

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ ներկայացված հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
______ ______________	______________ ______________
ստորագրություն	ստորագրություն
______________ ______________	______________________
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ______________-ի
Պատվիրատուի անունը — Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______ __________-ին կնքված N ______ __________
պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի ծածկագիր

ծածկագրով պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____-ին հանձնման-ընդունման արձանագրով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն

Ընդունեց
կայքը նախագծված ներկայացուցիչ

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն